

ԲԱԺԱՆՈՐԴԻՎՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
սարեկան 12 օր
վեցամսեայ 6
Արսասահմանի
հաճար սարեկան 15
վեցամսեայ 8

Սահմանադրի համար
Տարեկան 3 s r.
վեցամսեայ 1.50

Նրանցման տղր առա-
ջին երեսին համար 40 ս.
իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանրիւ կ. երեքեկ
աւելի ակցանքերու համար
20 սյ զեղը կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանրիւ

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԸ ԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՍՐԵՐԸ

Նախկէ կը գրուի
կըրպարուրեան հաս-
ցիին :

Редакция на вестникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
« Charjoum »
Varna
(Bulgarie)

Արսասահմանի համար
ձեռքի
(20 ՍԱՆՐԻՄ)

Պուշկարիոյ համար
ձեռքի
= 15 ՍԱՆՐԻՄ =

Գրութիւնք ևս չեն տրուի

«ՇԱՐՇՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԿԱՆՎԱԿԱՆ ՎՃԱՐԻ

ՅԱՅ ՀԱՐՈՒՍԸ

Կէս տարին անցաւ և մեր լա-
տանորայնի ոտուար մասը դեռ
իրենց բաժնեգրիները չըրկած
չեն : Կը խնդրենք շտապեն ի-
րենց պարտքը վճարելու :

ՅԱՆԿ

Ռուսներու մէջ զնարժումի
գրամերը ՈՒՏՈՂ բաժանորդնե-
րու :

Ոսկեհան Մարկոսեան—Պրայիւա
Մանուկ Գրիգորեան—Կալայ
Գրիգոր Մաքսանեան—Պուքրէշ
Սարգիս Կարապետեան—Խուլշա
Սարգիս Յովհաննէսեան—Պուքրէշ
Յովհաննէս Գառապեան—Մանկալ
Սեդրակ Մարտիրոսեան—Մէտաիտէ

ՀԱՅ ՀԱՐՈՒՍԸ

Յեղափոխական ամեն երեւոյթի
իրբէ անհաւասար կռիւ տիրոյ
բանապետական ճնշոյ և անտա-
նելի կարգերի դէմ, ամեն պա-
րագալում էլ փոքրամասնութիւ-
նից պահանջում է կուտակուած,
ամփոփ ոյժ Մեր յեղ. տաւառան
և հինգ տարուայ յեղիցուող
կեանքում այդ ոյժի երկու ամե-
նագլխաւոր, հիմնական աւպայ-
ման ազդակներէց առաջինը—
մարդը, կառուց անձնուրաց զին-
ւորը, կատարեց և գեռ շարու-
նակում է կատարել իր ծանր,
վտանգաւոր, միեւնոյն ժամանակ
սուրբ և վսեմ գործը : Մի մար.
տիրոս ժողովրդի ազգաութեան
տենչը կրծում է նրա զգայուն
սիրտ, ու նա գիտակցաբար, յե-
նած լոկ իր բազկի զօրութեան,
նետում է արեան հոսանքը,
մարտնչում իր իտէալի : զոհուում
է իր գաղափարի յաղթանակը
տանելու համար ...

Ի՞նչ էինք մենք սրանից մի-
այն քառորդ դար տուալ : Մի
ստրուկ, անվերջ հարստահար

ւոյ ժողովուրդ, որը հաշտուած իր
կեանքի պայմանների հետ, ոչ
միայն ազատութեան՝ այլ և ա-
մենաչնչին կարեւորութեան իսկ
արժանի չէր քաղաքական աշ-
խարհում : Ապտամբ Բոլղարիոյ
ազատութեան հմայիչ օրերին,
ստրկի միամտութեամբ կրք ու
զարկում էինք «հայկական պատ-
ւիրակութիւն» Բերլին (1878),
Հայաստանին մի քանի բարեկար
զուլթիւններ մտարալու : Խրիմ-
եան Հայրիկին այս պատասխանը
և պատմական անողոք դասն է-
ին տալիս—Թէ արեան գնով և
«եթէկամե զգալուլ են ճաշակում
ազատութեան ապուրը» : Այսօր—
Այսօր, ակներեւ է, որ «Հայ-
կական խնդիրը» հերթական է
դարձել : Պետութիւնների միտքը
զբաղեցնող օրուայ քաղաքական
հարցերից առաջինն է դա և ու-
նի իր պաշտպան—խոյնաննե-
րը, որպիսին է «Պրո-կրմենիա»-
կազմակերպութիւնը և ուրիշ ա-
կանաւոր եւրոպացիների մի ստ-
ւար թիւ :

Ի՞նչ բան տեղի տուց եւրոպա-
կան այս հայանպատ շարժման,
ո՞վքեր են այդ շարժման սեր-
մերը, ո՞ւր է արմատը : Դրանք
անշուշտ մի պատմական երեւոյ-
թի անխուսափելի հետեւանք-
ներն են : Գաղափարի այն մար-
տիկները, ազատութեան այն ող
ջակէզները, որոնց անթաղ դի-
ակները և ցրիւ և կած պաշտելի
ոսկրները ծածկել են տաւապանք
ների մի ամբողջ աշխարհ, կով-
կասից մինչեւ Կիլիկիա, Ադրի-
անու Պուլսից մինչեւ Սալմաստ,
այդ սերմերը նրանք են ... Բարձ
րաբերձ Ձէյթունը ապստամբեց,
կատալի Սասունցին իր արեամբ
ներկեց իր հսկայ լեռները և չու
զեց ընկճել, Կ. Բոլիսը զզրդաց,
Խանասորը թնդաց, հայդուկա-
յին զինատար խմբերը անգագար
զարկում—զարկում են : վերջա-
պէս հայութիւնը շարժել է և
վճռել է ազատ ապրել իրբեւ
մարդ և կամ մեռնել կուում—ա-
հա արմատը :
Հայ յեղափոխականը, ֆէզա-

յին և պրոպագանդիստը, թէ՛
կուում, թէ՛ բանտում, թէ՛ կա-
խաղանից տեցին այն գործնա-
կան փաստը, թէ հայը ընդու-
նակ է կուին, թէ նա գիտէ
պաշտպանել իր բռնաբարւած
մարդկային իրաւունքները և չը-
ընկճել : Մայր երկրի տանջուող
հայ տարրը ամենից լաւ է զգա-
ցել զէնքի, կուլ անհրաժեշտու-
թիւնը : Տասնեակ դարերի ըստ-
րուկ հայը, «արայն» իրերի դը-
րութեան հետեւանքով՝ բնակա-
նօրէն ըմբռնել է ճակատագրա-
կան ընդհանրի պահանջը—ապս-
տամբութիւնը : Փոխել է հայի
կեանքը հիմնովին, փոխել է և
ինքը—Հայը... Երայն ... միայն
չը փոխվեց հայ հարուստը, չը
հրաժարվեց սպառնալ անաար-
բերութիւնից : Նրա հոգու խոր-
քում ոսկին ամբարցել է իր սու-
տուածային խորանը, որին ա-
մենայն ջերմեանդութեամբ եր
կրպագում է նա : Եւ իրաւ, ի՞նչ
փոյթ նրան : Ամբողջ օրը անց է
կացնում իր ոսկիների հաշուով,
իսկ երեկոյան, կամ կաթէ—
չանտանում թեքած և կամ մե-
տաքսեայ փափուկ բարձրի մէջ
ընկողմանած, դաշնակի մեղմօ-
րօր հնչիւնների հոգեզմայլ ազ-
դեցութեան տակ, ձմում է նա
հեշտանքը... Ի՞նչ փոյթ, թէ երկ
րում քաղցից են մտնում, մերկ
են, թէ այնտեղ արիւն է հոսում :
Ի՞նչ փոյթ, թէ Սասունում հայ կի-
ներն են կուում թուրք զինուոր-
ների հետ, թէ արի և ներքաւիկը
թուղ տասնապատիկ առաւել զին
ւորների շղթան կտրում է : Թըւ-
չում... թէ, վերջապէս, ամբողջ
Տաճկա—Հայաստանն է ալեկոծ-
ւում և արիւնտ զոհը բարձրաց-
նում է իր մերկ բայց ահուելի
բազուկը և սպառնում է որոտալ
«լինել չը լինելու» :

Էմիլ Շիպարշիանց

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Զմիռնիս 19/1 օգոստոս 1902

Քանի մը օր առաջ տեղոյս մէջ
պատահած սպանութեան դէպքը Մաք-
սուտ Ասլանեան անուն անձին չափա-
զանց յուզած է քաղաքիս թէ հայու-
թիւնը և թէ կառավարական տղրուկ
ները, նոր յուզումներ կը յուսաց-
ուին :

Մաքսուտը Պոլիս ծնած է 32-33
տարեկան թրքական բարքերով ուսած
երիտասարդ մէր. ըստ մեր առած
ստոյգ տեղեկութեան Բարթուղիմէոս
դասան եպիսկոպոսին ազգական և
վերջինիս ու տեղոյս առաջնորդ Մել-
քիսեղեկի խորհրդով հոս եկած լրտե-
սութեան պաշտօնով հաստատուած
ըլլալը հետզհետէ հաստատութիւն կը
գտնէ :

Յայտնի է, որ այս տարուայ սկիզբ-
ները հոս մի ուրիշ սպանութեան փորձ
եւս տեղի ունեցաւ : Տիգրան Չիլին-
կիրօֆ անուն ռուսահպատակ անձի մը
վրայ : Սոյն անձը ժամանակով (99/99)
տեղոյս Դաշ. կոմիտէին հանդէպ
ծանր յանգանքի մէջ գտնուած ըլլա-
լուն այդ գէպքն այ վերագրուեցաւ
յեղ. կոմիտէին ինչ որ չէր կարելի
անհիմն նկատել, Սակայն գնդակը
վրիպելէն վերջ յայտնի պատճառնե-
րով Չիլինկիրօֆը ետ կեցաւ կառա-
վարութեան առջեւ : որոշ յայտնու-
թիւններ ընելէ, հակառակ իր անմի-
ջապէս ըրած ազդարարութեան :

Կառավարութիւնն այ խնդիրը շատ
չի պրպտեց և արտաքուստ տարբեր
երեւոյթ տալով գոցեց, քանի որ
փորձը կատարողներն այ բոլորովին
անյայտ եղած էին :

Այս դէպքը սակայն, ինչպէս մեր
հարուստ դասակարգին նոյնպէս և
կառավարութեան համար չէր կրնար
թեթեւ կերպով անցնիլ :

Բնական էր որ ներքուստ միջոցներ
խորհէին ատոր յաջորդելիք դէպքե-
րու առաջը աննելու համար :

Երբ քանի մը հարուստ հայեր միա-
ցած առաջնորդին կառավարութեան
հետ գաղափար դաշինք կազմած այդ
օրէն սկսեցին հետամուտ ըլլալ Իգմի-
րի մէջ երեւոյթեղափոխական ուրուա-
կան խեղդելու :

Ահա այս պարագային տեղս կը
հաստատուէր Մաքսուտ Ասլանեանը
«Մանդուկէի էֆքեար» լրագրին թղ-
թակիցի քօղին տակ : Բան մը որ
յիշեալ լրագրը վերջերս պաշտօնա-
պէս հերքեց հասարակութեան ու
լրագրիներու հաղորդած այդ լուրը :
Իգմիր հաստատուելէն վերջ Մաք-

սուտը անընդհատ յարաբերութեան մէջ էր Պօլիս Բարթոլոմէոս Չամբի- կանին հետ և ոտքը չէր բրդէր ա- ռաջնորդարանէն ու ոտակուստու- նէն. ինչպէս իր զգուշաւոր ընթացքէն կերեւի Մաքսուտը մասնաւոր հրա- հանգներ կատարելու իր ամբաստանու- թիւններուն մէջ որոշ ու փաստացի ըլլալու, իր ուշադրութիւնը մասնա- տրապէս ոչարժեքն յեղափոխական- ներու վրայ կեդրոնացնելու համար, ուս- տի իր այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր նախ լաւ անուն մը հանել որով յաճախ սրճարաններուն մէջ վիճաբանութիւններ կը նիւթէր ինքզինքը թունդ ազգասէր մը ներ- կայացնելով: Մաքսուտի այս ճար- պիկութիւնները կրնային ոչինչ նշա- նակութիւն ունենալ զազանի կաղ- մակերպութեան մը համար, մտնա- ւանդ ինքը իր այդ զէպէրն ու դերին մէջ կրնար միշտ կարեւոր սինթէզ մը նկատուիլ եթէ սակայն սկիւլպտի զէպէ մը չը գար խնդրոյն հանգա- մանքը փոխելու:

Անցեալ ապրիլ ամսու միջոցին Յա- կոբ Արրահամեան անուն Ամս. ի կա- հպատակ անձ մը կը զիմէ առաջնոր- դարան Մեղիսեղեկին նիւթական և բարոյական անկողնութիւնը ինքզինու յեղափոխական գործին համար: Յա- կոբը առաջնորդարանի ծառաներէ միոյն կը հարցնէ Մեղիսեղեկին ներքը ըլլալը կամ ըլլալը և փափաք կը յայտնէ որ եթէ ներսն է քանի մը վայրկեան տեսնուի կողմէ: Յակո- բէն կը հարցուն թէ ինքը ո՞վ է և ի՞նչ գործով կուզէ տեսնել, առաջնոր- դին: Յակոբը իր պատու իրակութեան այցաբարտը կուտայ: Մեղիսեղեկին ներկայացնելու համար, որով կրնայ վերջինս հասկնալ իր ով ըլլալը: Եւ քարտը կը յանձնուի Մեղիսեղեկին որը ստացածին պէս մեծ այ- լալու թեան, չփոխութեան կ'ենթար- կուի:

Այդ պարագային առաջնորդին մօտ կը գտնուին Մաքսուտը և Գարաթա չի քահանան տէր Աբրահամը: Վեր- ջիններս նշմարելով Մեղիսեղեկի այ- լալու թեան կը հարցնեն պատճառը, և Մեղիսեղեկը երկու խօսքով խն- դիրը հասկնցնել վերջ կը դասնայ, քարտը բերողին ըսելով ճշմարտեք, առ այժմ չեմ կրնար տեսնուիլ: Երբ այս չոր մերժումը տեղի կուենայ Յակոբը բորբոքուած քանի մը սպառ- նալիքներ կը տեղացնէ Մեղիսեղեկի հասցէին ըսելով, որ իր այդ մեր- ժումը սուղի պիտի նստի իրեն:

Յակոբին այս յուզուած վայրկեանին Մաքսուտը տրդէն իր մօտն էր. հա- զիւ առաջնորդէն քիչ մը սեղեկու- թիւն ստացած ցատկած էր դուրս իր որը ընելու տեսնով: Ու Յակոբը ա- ռաջնորդարանէն դուրս գալով Մաք- սուտը կը հետևի իրեն մինչև յու- նական Տիմիթի կոչուած թաղերը, ուր վերջապէս Յակոբը իր հետքը կը կտրանցնէ: Մաքսուտը իր գործը ու- բրիչ օրուան թողով գլխիկոր կը դառնայ իսկ Յակոբ, կափսոսայ որ զէնք չուրի եղեր մօտը յանկարծակի բերելու համար զայն:

Մինչ Մաքսուտը իր որը կը հե- տապնդէր միւս կողմէն առաջնորդա- րանին մէջ մի ուրիշ անձ եւս կը պատրաստուէր Յակոբը գտնելու համար: Տէր Աբրահամին որդին Գա- բրիէն էր այդ, սրիկայ մը, որը Ամերիկայ երթալու համար անցագրի խնդիր մը կարգադրելու պատճառով առաջնորդարանը կը գտնուի այդ միջոցին և իրազէկ ըլլալով Յակոբին

այցելութեան նպատակին կը յայտնէ որ ինքն ալ կը ճանչնայ այդ անձը և կրնայ գտնել:

Գարեգինին քահանայ հայրը իր ա- մենապագայի նկարագրով և տխուր արարքներով յայտնի է ամբողջ իզմի- թին: Իր զէմ եղած բողոքները, զին- քը Գարաթաչի եկեղեցիէն վճռուելու համար եղած ժողովուրդի միահամուռ պահանջները մինչև այսօր ալ գոյու- թիւն ունին, որոնց միակ զիմուդ- ըրող Գարաթաչի Աստուածը Պալիոզն է որուն կամքին չի կրցաւ դիմադրել զիս եւս ամբողջ քնակչութիւն մը: Մեր նպատակէն դուրս է հոս քահա- նայական, եկեղեցական խնդիրներով զբաղիլ միայն սա չափը ըսնքը, որ Գարաթաչի այս քահանայ կոչուած տխուր արարածը ի հարկին իր քա- հանայական սքեմը թիւրք մոլորի ճուպէին հետ փոխելու ընդունակու- թիւնը բարձրէն յայտարարելու քա- ջութիւնը ունի: Իր եղբայրը շատոնց արդէն իր թիւրք կապիւր և կազո- թէ, իր գաւակներէն մին գիւս երկար ժամանակ չէ որ կ'ըջ գլխիկէ այժմէն- թիւն ունի ցարդ:

Այսպէս, տըր Աբրահամին տղան Գարեգինը իր Ամերիկայ երթալու մտադրութիւնը մէկդի թողով կը դառնայ լուսն-մատնիչ: . . .

Նոյն իրիկուէն ոտակուստութիւնը զարմանալի հոստուութեամբ սեղեկի դառնալով առաջնորդարանի ամբողջ անցքերուն, իր մօտ կը կանչէ Գա- բրիէին և պաշտօն կը յանձնէ ան- յապաղ գտնելու առաջնորդարան ներ- կայացող յեղ փոխական երիտասար- դը:

Գարեգինը սիրայօժար իրեն եղած առաջարկին կը խոստանայ հաւա- տարմարք ծառայել կառավարու- թեան: Ու այդ միջոցին կը ծանօ- թեան պաշտօնակց Մաքսուտ Աս- յանեանին հետ որով կը դառնան այս երեքը իրարու անբաժանելի ըն- կեր պաշտօնակիցներ: . . .

Այդ օրէն ալ եւս այս վատերու միակ գործը գիւսը ցերեկ փողոցէ փողոց, սրճարանէ սրճարան պտտիլ Յակոբը գտնելն էր:

Գանի մը օրուան անընդհատ փնտր- տուքներէ վերջ, վերջապէս օր մը (մայիսի 5-ին որքան կը յիշենք) քա- ղաքին Սթաւրո կոչուած կայարանին առջև կը նկատէ զայն որ երկա- թուղի կը նստէր իզմիթի արուստան- ներէն իրենամա երթալու համար:

Մաքսուտ, Գարեգին և թիւրք լրտեսներ անմիջապէս կը մտնեն շո- գեկառք հետեւելու համար, ու վեր- ջապէս Բուսովա իջնելու ժամանակ Մաքսուտը և թիւրք լրտեսները կը փութան Յակոբին ետեւէն. յանկարծ կը կաշկանդեն ձեռքերը և միջոց կուտայ միւսներու կապտելու: որմէ վերջ վրայի զէնքը և կարգ մը թղթե- րը գրաւելով զոչ կառք մը կը զնեն ուղղակի իզմիթ կը բերեն առանց ու է ուրիշ ստիկանատուն տանելու:

Հարցաքննութեան մէջ Յակոբը հակառակ իր օտարապատկութեան իրեն ընծայած առաւելութեանն օգ- ստուելու հանգամանքին, կը յայտա- րարէ, որ ինքն է ամեն գործողու- թեանց միակ հեղինակը, որ ինքը Գարիգէն եկած է յատկապէս դրամ ձեռք բերելու համար, որ իրմէ զատ ուրիշներ չը կան միայն մէկ հօգի կար ան ալ մեկնեցաւ ևն. ևն.

Յայտնի է որ նոյն միջոցներուն մի ուրիշ անձ եւս կատակածուած էր կա- ռավարութեան կողմէ, որը նոյնպէս

իրը եզրկատուէն յատկապէս հոս եկած կը լինի եղեր խոսովութիւններ հա- նելու նպատակաւ ու հակառակ կա- ռավարութեան ջանքերուն կը յաջողի փախչիլ ազատիլ:

Ուստի Յակոբին այս յայտնութիւնը քաջալերու թիւն մը եղաւ Մաքսուտին ու Գարեգինին որոնք բացարձակա- պէս իրը մատնիչ յայտնուելէ վերջ սկսեցին հասարակութեան մէջ յեղա- փոխութիւնը մեռած ցոյց տալ, ամեն տեղ խորտալով որ սեթէ կան յեղա- փոխականներ թող հրամանն. մենք մատնիչ ենք: . . .

Այսպէս, ընդարձակ ասպարէզ գտան այս քայլերը երբ մանուկուց յեղա- փոխական կազմակերպութեան սպառ- նալիքները, նախընթաց յայտարա- րութիւնները անգործադրելի մնացին ժամանակ մը: Լրտեսներու թիւր սկսեց ածիլ, հակափոխական հոսանքը յախուռ յառաջ գիծել, զարգանալ: Ժողովուրդի ամեն կար- զի կռկանները ազատ ասպարէզ հա- մարեցին իրենց աղտերը դուրս թա փնչու յեղափոխութիւնը վարկաբեկե- լու համար: Պահ մը բացարձակ կար- ծիք կազմուեցաւ թէ հայ հարուստնե- րուն թէ՛ կառավարութեան և թէ՛ հասարակութեան նոյն իսկ զիտակ դասակարգերու մէջ թէ իսկապէս յե- ղափոխութիւնը մեռած էր: Իզմիթի մէջ կամ օրինակոր կազմակերպու- թիւն չը կար արդէն ու միայն գուր- սէն ներս սպրդող մի կամ երկու ան- հասանելու գործ էր տեղի ունեցածը ինչ որ Յակոբը եւս յայտարարած էր իր հարցաքննութեան մէջ:

(Շարունակելի)

ՉԵՐԱԶԻՆ

«Մարմէնի» ընթերցողներին ուշադ- րութեանն չը վերկացաւ անշուշտ, վերջին օգոտոս 1 թուի մէջ ՎՍԽԻՐ մը» վերնագրով յօդուածը: Խորագիր տար Չերազ չենք գիտեր ինչ ան- տեղի պատճառներէ դրդեալ. քննա- դատելու ելած է Դաշակցականնե- րու կողմէ սակէ գրեթէ մի տարի ա- ռաջ Ֆրանսայի արտաքին գործերի նախարար Պ. Տէլբասէի ներկայացու- ցած հայաստանի բարեկարգութեան մի ծրագիրը: Տիրազը կար- ծիքով թաշակցականները հայ ազգի մի փոքրամասնութիւնը լինելով ի- բրաւունք չունէին Պատրիարքարանի ծրագրէն զատ ուրիշ ծրագիրներ պատ- բաստելու, մասնաւոր որ եւ իցէ զի մուժ մի յեղափոխական մարմնի կող- մէ, որպիսին է Դաշակցութիւնը, շատ աննպաստ կը գտնէ հայութեան դատին և նոյն իսկ վնասակար ո- ռովհետեւ եւրոպական պետութիւն- ները առ հասարակ շատ վատ տրա- մադրուած են եղեր զէպի յեղափո- խութիւնը կամ յեղափոխականները եւ իր այս վերջին խօսքերի իբր հաս- տատութիւն, առաջ կը բերէ Սուլ- թանի յայտնի գործիք, հայերի ուխ- տեալ թշնամի, Մէլվէթի խմբա- զիր Բիզալին՝ այդ ցած թուրքին կարծիքը: Իսկապէս իրենց խորհուր- եւ գործելու եղանակէն դատած Չե- րազ եւ Բիզալի-ար շատ մտովի են. այդ տեսակէտով կարելի է Չերազ ալ հայերի բիզան անուանել:

Չերազը գիտեր թէ Տ. Չերազ իր այս հակառակական յօդուածով ի՞նչ ակնար- նել ուզած է. ամեն արդար խորհողի անուրանալի է թէ վերջին սուկալի

փորձութեան օրերին, հայ ազգը ըն- ջուած իր պատրիարքէն, իր ապա- ներէն եւ առաջնորդներէն, դաւա- ճանուած իր յեղափոխականներէ մյ ստուար մեծամասնութեանէն, այս- այս ճգնաժամի օրերուն միայն Դա- նակցականներն էին, որ իբր անվե- ճեր ախոյեան ազգային գառին, հա- ւասարիմ մնացին իրենց կոչման և սիգրուներին, յեղափոխական դրօշը միշտ բարձր բռնելով: Գաւառների մէջ իրենց արի եւ անձնուէր առաք- նալների եւ ֆէտայիների միջոցաւ, ժողովուրդը քաջալերեցին, խրախու- սեցին եւ կրցածուն չափ քրքրու- ւե թրքերու հարստահարութեան պաշտպանեցին. այստասովանի մի ալ ձեռքերին ծալլած շր նստած, շարունակ նշանաւոր եւրոպացիներին դիմումներ ընելով, բարոյական և քրոպայի ուշը մեր գառին կողմը լսրեցին. անկեղծ ըլլալու համար պէաք է խոստովանել թէ այս օրեր տեղի ունեցած համակրական շար- ժումները եւ ժողովները մեր գառի պաշտպանութեան համար, օրօշակի վարիչներին կողմնակի դիմումներ արդիւնքն է:

Հակառակ վերջին տարիներին դան ժողովներն եւ տխուր փաստերին, Տիրազը Չերազը նորէն նոյն համոզման վրայ ինչ ինչ որ սակէ 3-10 տարի ստալ յԱմերիկա, Հնչակեաններին ժողովի մը մէջ յայտնած էր թէ յեղափոխութիւնը անանգի եւ վնասակար է. թէ մենք յարմար առթին սպասելու ենք. երբ յոյները կրէ- ստեն, Պուլկարները՝ Մակիդոնիան պահանջելու ելլեն, մենք ալ ալի ժամանակ մեր գառը կը պաշտպա- նենք. փառք պատահարին որ եւ կառակը սպացուցեց, Ահա Կրէա- ցիները ոտք ելան եւ տաճկի անիւ- նալ լուծը թօթափեցին. իսկ մենք տակաւին սարուկ ենք, որովհետեւ մեր մէջ գրեթէ շարժող տրիումֆներ տեղի շատ գառնուեցան քան սուր շարժող քաջեր:

Տիրազը Չերազը իսուլ ու կոյր ձեւա- նալով յայտնի իրողութիւններին ա- ռաջ, նորէն կը պնդէ թէ հայերը մէկդի ձգելով ու եւ յեղափոխական փորձ, իրեն նման զիւսանալիական դիմումներով բաւականութեամբ են, Պա- մու թեան այնքան լաւ ծանօթ Տիրազը Չերազը ի՞նչու անցեալ օրինակները աչքի առաջ չը բերեր, արեւօք էր յիշ՞ մարդկային տարեգրութեանց մէջ մի զէպքը որ իր փաստը հաս- տատէ. կարող է մեզ որ ց տալ մի ազգ որ առանց արեան ծովուրդի ապաստութիւնը գտած ըլլայ: Եւրո- պան որքան ալ վատ տրամադրուած ըլլայ զէպի յեղափոխութիւնը, ըլ- լայ ու խոտալ թշնամի Մեղիսեղեկի սրբազան դաշակցութեան օրե- լին. ըլլայ Պրնօֆիլիսի կամ Պիլզմար- քի հակափոխականութեան հոսանք- ժամանակ, միշտ հարստահարու- ների գառին միջամտած է. յեղափո- խականներին մղած արդար կռիւն- թու մեր դատը, ատոր պատճառը մեր կազմակերպութեան թուրք- թիւնն էր, որ չը կարողացանք որ եւ իցէ զօրաւոր ցնցուծ յառաջանել աշխարհի մէջ:

Դրօշակեաններին դիմումը միւստի Տէլբասէին, ոչ մի տեսակէտով էր կարելի վնասակար համարել, այլ վերջին ծայր օգտակար եւ նպատա- կայարմար մի դիմում էր իր տեսա- կի մէջ, Հայակեր մասուլը (հայ թե- եւրոպական) երբ Սուլթանի գործած

կաշնորհի հետ ձեռք ձեռքի սուսած աշխարհի հաւատացնել կը ճգնէին. թէ հայ յեղափոխականները անիշխանականներ են, նիւշխուսներ են եւ չեն գիտեր տակաւին ի՛նչ տեսակ սեւ սուտեր եւ զրպարտութիւններ հայ յեղափոխականների եւ մասնաւորապէս Իրօշակեանների հասցէին ուղղել չէին խղճեր, մի այդ տեսակ դիմում այդ ժամանակները, որ եւ իցէ եւրոպական կառավարութեան մօտ, շատ օգտակար եւ նպատակաւոր մար էր. ամեն սեւ զրպարտութիւն հերքելէ զկէր. այդ դիմումը սպացուցեց որ հայ յեղափոխականները համեստ ծրագրով աշխատողներն եւ իրենց պահանջները խիստ չափաւոր: Ի՜նչք Տիրար Չերագի փոստին, եթէ այդ ծրագրերը իրենց այլապես թեմաք Եւրոպայի շուտ յանձնու ընդ ին ունին կրօն, մի-թէ հայ Պատրիարքները արարքը նուազ հակասական եղած են իրարու: Խորհելու այդ սեւակէտէն դատած՝ արդեօք Եւրոպան ներսէսի եւ իզիրեանի դիմումները բանաւոր պիտի համարի, թէ այն կարգ մը մասնիչ եւ զաւաճան պատրիարքների արարքը օրինաւոր, որոնք հետզհետեւ Պոստյ պատրիարքական գահին վրայ բազմելով վատութեամբ իրար գերազանցել ջանացին. Ի՜նչ յանուն ազգին Եւրոպայի յայտարարելով թէ յերկիր-երկիր գոն են իւրեք կատարութեանն: Ո՛չ Տիրար Չերագ, բարեխղճ լինինք, Եւրոպական դիւանագիտութիւնը սքաւկապուկի խաղերով չէ որ պիտի զբաղի:

Որ Իրօշակեանների դիմումը սուսուցուտ եւ վնասակար էր, ի՛նչ անուն տանք իւր Տիրար Չերագի առ ոսոս Մարտին ըրած այցելութեան: Այլ ու ձախ խոհմտութեան դատեր կարգացող Տիրար Չերագ բնաւ առաջուց չէ՞ր ուսում ասիրած իոր առնելիք քաղը. այն կարգի եւ այն պատճառները որ իւր կարծիքով Հապէշների համակրութեամբ պիտի շարժին զկալի մեզ որ յիստէ այդ առթիւ, Կանգրիպ կատային կամ Ռաս Մարտինին ընդհակառակը Հապէշների գայտլովի եւ ասելով իւրեր կը շարժին դէպի հար-յեր: Ամեն Հապէշ որ կարող է իւր ձեռքի աչք ձախէն որոշել. ծանոթ է Սահակ-Տոմոթէոսի պատգամաւորութեան պատմութեանը... յիշելով այդ օրերը անոնց հին գաւերը եւ կիրքերը գրգռած կրկանք հայերի հանդէպ, ե-թէ չեն պիտի 60-ական թուականների վերջերն էր. որ այդ պատգամաւորութիւնը Եւրոպայի ընայի պատրիարք ճամբայ հանեց Հապէշաց յէնդորոս թագաւորին գնալու. այդ Ափրիկեցի բնակալը Անդրիայի 2 մի-սիտար եւ կառավարական հիւպատոսը շղթայի գարկած բանտարկած էր «եթէ ձեր թագուհին այնչափ զօրաւոր է, թող զայն եւ զձեզ իմ ձեռքէս ազատէ» խորխապով անոնց երեսին. հապատգամաւորները պաշտօն ունէին թէնդորոսի մօտ բարեխօսելու որ այդ Անդրիացի կալանաւորները ազատ ա-ձակուին. Երկու տարի իզուր խեղճ վարչապետները թիկրի եւ Ամարայի լեռները թափառեցին եւ թէնդորոսի մարաքաղաքը չը կրցին հասնել. վերջապէս Անդրիացեաց համբերութիւ-նը սպառած Արարաւի գլուխը չը բարձրացող իրենց նաւերը Եօայի լեռները բարձրացուցին եւ կօնտար մայրաքաղաքը ուժակոծելով, իրենց մարդիկը ազատեցին. թէնդորոս ի տես Անդր. բանակին սարսափահար անձ-

նասպան եղաւ, ատով ալ այդ սխուր կատակը վերջապէս Անդրիացիների համար. բայց ոչ մեզ համար: Հայ պատգամաւորները անյաղող վերադառնալով իրենց տաճարները ուղեւորութեանն, «երկամեայ պանդխտութիւն ի Հապէշի տան» անուն գիրք մը հրատարակեցին. Անդր. թագուհին նուիրուած, այնտեղ շատ սուկայի գոյներով նկարագրած էին Հապէշացի վարքը, բարքը եւ կեդոտտ բարոյականը. Անդրիական կառավարութիւնը, այդ գրքէն հազարաւոր օրինակներ Հապէշերէնի թարգմանած, Հապէշներին նուէր դրկեց. այն օրէն հայոց եւ Հապէշացի մէջ սուկայի պաղութիւն մը ծաղկեցաւ, եւ այդ այն աստիճանին հասաւ, որ նոյն իսկ Եւրոպացիները Հապէշ վանականները մինչեւ այն ժամանակ հայոց վանքէն ստացած սնունդը եւ նպատար, արհամա-րանք մերժեցին. դեռ ասկէ 10-12 տարի յառաջ Եւրոպացիները հայոց վանքին մէջ մի Հապէշ վարդապետի հանդիպեցայ, որ հայերէն կը սորվէր. երբ պատճառը ուզեցի իմանալ կեզծ ժպիտով մը ինձ պատասխանեց թէ «ես ալ դէպի Հայաստան մի ուղեւորութիւն կատարելու նպատակ ունիմ, Սահակ եպիսկոպոսի երկին նման մի քաղուած ալ ես պիտի հրատարակեմ վերադարձիս Հայոց վարք ու բարքի մասին»:

Ի հարկէ հայերի համար բոլորովին նշանակութեան զուրկ է. Հապէշների նման, վայրենի, բարբարոս եւ իւր անդրձեղեղեան սովորութիւններով Ափրիկէի խորքը ապրող մի ցեղի համակրութիւնը կամ հակակրութիւնը մենք սոյն պատմութեան մէջ բերելով Տիրար Չերագի գատողութեան եւ զանակը յուսարանել ուղեցինք, որ եղած չելած սեղը ամենուն խոհեմութեան դատեր տալու կելլէ եւ իւր վերջին տարիների ընթացքով կարծես նսեմացնելու կաշխատի իւր անցեալ գործունէութիւնները: Մենք կը կարծենք թէ Բօթրուզայան Արփիար եւ ուրիշ իրենց սկզբունքը դաւաղ ինկած յեղափոխականներ իւր օրինակ բաւական են ապացուցանելու. որ Հայ ազգը այսօր Ամբարշական օրերու անարբերութեան մէջ չը գտնուիր, որ իւր ազգային սրբութեանց հայհոյող Չամուռեան պատուելիները վերի անկիւնները բազմեցնէ. անոնց համար մի տեղ միայն կայ, անկեալներու դասը, ուր կերթան իրենց անցեալ փառքը ողորտը:

Սոյն յօդուածագիրը չը լինելով ոչ մի կուսակցական, Տիրար Չերագի արժանիքը գնահատող եւ անոր անձը յարգողներէն եղած է ցարդ, սակայն դարձեալ կը կրկնենք թէ անկեզծ ըլլանք: Յեղափոխութեան հին առաջնակները նախանձոտ աչքով դիտելու չեն նորերի դործունէութիւնը, այլ անոնց քաջալեր եւ խրախոյս հանդիսանալու են, ոչ թէ անտեղի եւ անխմանակ քննադատութիւններով մաքր պղտորելու աշխատելու են:

Կ. Փոդոսեան

ԹՈՒՐԲՈՅ ՍԱՍԻՆ

(Շար. Ասխուրդ քիւրէ եւ վերջ)
Բարիք, 2 օգոստոս 1902

Ուրիմն դուրանի բացարձակապէս հակառակ գործելով փաշաները, մեծ պաշտօնեայները իրենք իրենց իրաւունք սուսած են հարկէներ ունենա-

լու. եւ թէ Ապտիւլ Համիտ մինակր վեց հարիւրէն աւելի կին ունի իւր պապային մէջ, Կայսերական սե-րային քով կան ուրիշներ ալ որոնք տնոր մասնաճիղը կրնան համարուիլ. Սուլթանի եղբայրները, իր որդիները. իր ազգականներն ալ բազմաթիւ կրնան ունիլ, որոնք նկատելի կերպով կը բարձրացնեն գերուհիներու թիւը որոնք բանտարկուած են Թուրքիոյ զանազան պաշտօններու մէջ: Երկար տարիներու մէջ կազմուած մարդահամարի մը համեմատ Սուլթան Համիտի գահակալութեանն ի վեր, այսինքն 26 տարիներէ հետէ, սչորս հազարէն աւելի երիտասարդ աղջիկներ սէրայէն անցեր են. հաճոյքի մարմիններ՝ որոնք կոչուած են գոհացում տալու մարդու մը փա-հազնեղուս եւ կիրքիւսուս, որ Սու-համմէտի ներկայացուցիչը կը նկատուի:

Ինչպէս կը հաւաքեն հարէ՛մ իւր-րու աղջիկները եւ մասնաւորապէս կայսերական հարէ՛մները:—Մասնաւոր մարդիկ կը չըջին այն երկիրներու մէջ որոց կրնան զեղեցիկութեան համբաւ ունիլ. մասնաւորապէս ուուսական Չէրքէզիստանի մէջ եւ այն տեղ պարզապէս կը գնեն սպիտակա-մորթ աղջիկները:—Սեղծ աղջիկներ որոց միակ յանցանքը զեղեցիկ լինելն է կը բաժնին իրենց ծնողներէն մեծ ու պղտիկ փառաւոր խոստումներով:—Շատ յաճախ արեւելք ցի վաճառականը (թուրք բաժիք աւելի լաւ էր) իր զոհին կը խոստանայ հետը ամուսնանալ եթէ իրեն հետ իր հայրենիքը գալ՝ աղջկոյ ծնողներուն կուտայ ընծաներ. եւ երբ դժբաղդ աղջիկը է. Պօլիս հասնի, իւր նշանակը իւր վրայ կը նայի իբրեւ լաւ արջառի վրայ եւ զայն Սուլթանին կը ծախէ պատուաւոր վարձագրութեան մը փոխարէն: (Ո՛րչափ պատուաւոր) —Երբ ճարպիկութիւնը չի յաճողի, այդ յանդուղն վաճառականները չեն վարանիր բռնի բաժնել գեղեցիկ աղջիկ մը իր ծնողներէն. զեղեցիկ կին մը իր էրկիէն, Կայսերութեան ներսերը աւելի վատ կերպով կը կատարեն այս բաները: Սպիտակամորթներուն վաճառումը վարչական միջոցով տեղի կուներայ, նահանգի մը կառավարիչը հրաման կը ստանայ ձեռք ձեռք ձեռք եւ ի Պօլիս զրկել զեղեցիկ աղջիկները. Ամենայն միջոցով նա պէտք է այս հրամանը կատարել եւ վա՛յ անոր որ այս մա սին բողոքի չհամարձակի: Ասկէ մօտ քսան տարի սուջ Սաաիք փաշա մեծ վէջիկը իր դիրքը եւ ազատութիւնը կորստուց, այդ դժբախտներուն (կրնաներուն) վրայ գլխու համար, Արտաքոյ կարգի պաշտօնով մը իզմիրի կառավարիչ նշանակուելով Սատիք փաշայ հրաման ստացած էր Սերային համար աղջիկներ ձեռ ձեռ. նա բաւականացաւ նկատել տալ թէ, մահմետական կրօնքը այդ բանին կը հակառակէր եւ թէ այդպիսի գործ մը հակառակ էր մարդկութեան: Անվի-ջապէս պաշտօնանկ լինելով Նիսի կղզին աքսոր դրկուեցաւ, ուր դեռ կը գտնուի 22 տարիներէ ի վեր՝ քաւելու համար այն ոճիկը որ գործած էր զոհներու համար գլուխներն ունե-նայով եւ իր տէրը, Սուլթանը զուրանին հպատակելու հրաւիրելով:

Վերը ըսինք թէ Ապտիւլ Համիտի գործակատարները գիտաւորաբար Չէրքէզներու երկիրն ընտրած են իրը թատր իրենց քաջագործութեանց: Յիբաւի Երազը քէօշիկի մէջ

գտնուող վեց հարիւր կրնանք ենք ք հարիւրը Չէրքէզներ են, Կալով այս դժբախտներուն կեանքին, հարէ՛մի գոհն ներս մտնելէն յետոյ, կարծուածէն շատ աւելի դժուար եւ ցաւալի է: Ընդմիջաւ բաժնուելով ընա-կան կեանքէն, անոնք յաւիտեան փակուած են, գերի եւ բանտարկեալ, երենց երիտասարդութիւնը պիտի անցնի՝ ողբալի՛ հեռի բոլոր սիրելի հակներէ, որոց տեսոյն այլեւս չի պիտի արժանանան: Առանց սէրի, առանց ընտանիքի, առանց բարեկա-մի. այս դժբաղդ աղջիկներուն միակ գուարճութիւնը պիտի լինի երբեմն երբեմն գոհացում տալ տիրոջ պագ-շատ ցանկութիւններուն որն իր ցանկութեան գոհացում ապէն յետոյ, բնաւ երբէք չի պիտի զբաղի այդ հաճոյքի գործիով որ իրեն ծառայած պիտի լինի միայն մէկ անգամ:—Եթէ ճշմարիտ կամ երեւակայան են յան-ցանքի մը համար, անոնք Սուլթա-նին անհաճոյ եղան, անխնայօրէն նա զանոնք կը պատժէ ամենանգութ պատիժներով, նոյն իւր մահով, եւ կամ յանկարծ պաշտաւէն դուրս կը նետուին, եւ կը զրկուին հետու երկիր մը առանց նիւթական միջոց մը տալու այնտեղ ապրելու, անոնք աւոթութեանէ չի մեռնելու համար ստի-պուած են աշխատիլ, ինչ որ յաճախ շատ դժուար է աշխատանք գտնել, եւ կամ ստիպուած յեն բողոքութեամբ պա-հել իրենց կեանքը: Երբեմն ոմանց զրուցիւնը կրնայ փոխուիլ եւ անց ինչպէս. եթէ անոնցմէ մին խալի-ֆային հետ յարաբերութիւն ունենա-լէն յետոյ, յղի միայ, սովորութիւ-նը կը պահանջէ որ եթէ նա աշխարհ բերէ մանչ մը, գերութեանէն ազատի եւ օրինաւոր կրնայ կարգն անցնի: Իժբախտաբար ինչ որ զիրենք պիտի փրկէր յաճախ իրենց կորուստի պատճառ մը կը լինի: Միւս սուլ-թանները որք բնաւ չեն բազմար ի-րենց թուոյ շատնալուն. միայն մէկ նպատակ ունին երբ իր գերին յղէ, այդ է՝ վիժում մը առաջ բերել:

Միայն անոնք, որոնք շնորհիւ ի-րենց պաշտօնին—օրինակ՝ բժիշկ-ները—կրցած են մերձեալ կայսերա-կան հարէ՛մին, գիտեն թէ ինչ սե-սակ չարչարանքներու են թարկուած են այն դժբաղդ աղջիկները, որոց կուզեն գաւազը իզոզել:

Սպիտակամորթ կրնանք վաճառ-ման դժբաղդ գոհներէն, ամենողբա-լիները անկասկած արեւելեան հա-րէ՛մներու այս խեղճ կրնան են, եւ ժողովականներու սիրտը պիտի զայ-րանար եթէ գիտնային այն բոլոր ու-ճիւրները, բոլոր ամօթալի գործերը, բոլոր սարսափելի բաները որոնք կը կրկնուին ամեն օր օսմանեան կայս-րութեան այդ փակեալ տուններուն մէջ, եւ մանաւանդ կայսերական հարէ՛մին մէջ, որու քով միւսները բան մը չեն:

Անհամար են այն դժբաղդ աղջիկ-ները, որոնք իրենց ծնողներէն բաժ-նուելով իրենց ամենամատաղ ժամա-նակէն ի վեր, շատ մը չարչարանք-ներ քաշելէն յետոյ — յաւիտեան գիտութեան մէջ եւ սեւ ներքինիներու խաղաղ հայեացքին աակ—միայն մահով ազատած են:—Ո՞ր կեանք աւելի ողորմելի է քան այս խեղճ կեղ-րոնը, որ եւ ոչ մէկ ճառագայթ եւ ոչ մի սէր չի գար տաքցնելու:

Մե ի՛մ Մ. Դուրք թիկ

ԲԱՅ ՆԱՍԱԿ

Հասան ճէֆրի Գուրպէթ օղլու, շամշնալով ծեծուելուդ դէպք յիշեցուցեր էք ձեր ազտոտ թերթին մէջ: Բայց աւելի ամօթ բր եղածին պէս չեա գրած: Կրկին դու գիտցիր և այն օրհնեալ փայտոս որ վրագ կոտրեցաւ և հիմակ դատարան կսպասէ քու ատրճանակիդ հետ: Մեզի համար պարձանք պէտքութիւն չունի: Ես քո գէտ քարով կանգնած էի իսկ դու ատրճանակով: Այսքան յիշէ որ եթէ Մեսրոպ Գուրպէթ-եանի ատրճանակէն վախցող լինէր, կոտրած ձեռքովդ ատրճանակ կրակ տուած ատեն կր փոխչէր: Հինգ անգամ կրակ բացիր, 15 անգամ Մշեցու քար կերար: գրած ես թէ օդին պարպեցիր ատրճանակ, կարելի է որ մոռցեր ես, կամ թէ չես ուզեր ճիշդը խօսել: պակասութիւն է քեզի: գնա այնտեղ, պատին նայէ գնդակներ թեղ կամ վկաներէդ հարցուր: Վկաներդ դէպքին առաջին մասը չը տեսն, ես և դուք գիտենք: բայց միւս տեսան, թող պատմեն: Մեզի անծանօթ պուրկարներէն հարցուր, անոնք քեզի կը ճանչնան:

Մեսրոպ Վարժապետեան

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կը փութանք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Պուրկարի ծանօթ վաճառականներէն մեծապատիւ Տ. Սարգիս Գուրպէթեանի, որ բարեհաճեցաւ ինքնաբերաբար Ուսուցչ. մարմնիս յանձնել 36 մէթր «բրէթ» վարժարանիս վարձագոյրներ պատրաստելու համար:

Վառնայի Ազգ. վարժարանաց Ուսուցչ. Կարմիր

— «Գութան» գիտական հանդէսի տեղւոյս յարգոյ բաժանորդք թող դիմեն նոր գործակալ Համբարձում Գիրիշեանի «Մուսալլա» և ստանան իրենց թերթերը:

Նոր բաժանորդագրուիլ փափաքողներ ինչպէս նաեւ հատով գնել ուղղուներն ալ կրնան գիծել յիշեալին:

Մէկ թիւի գինն է մէկ լէվ. կարծէ որ ամեն անհատ ունենայ այս հանդէսին ամբողջ թիւերը որոց պարունակութիւնը խիստ շահեկան է:

— Պօլսոյ ազգային և խառն ժողովին անդամներէն մի քանին պատրիարքէն պահանջներ և ստիպել են իր պաշտօնը չը կատարել մինչեւ որ Սուլթանը վերջ չը տայ դէպի հայերը գործ դրուած խտութիւնները: Պատրիարքը հնարկուեր է իր ընկերներու այդ պահանջին:

— Կիրառուեալ խմբագիր Հասան ճէֆրի Գուրպէթ օղլուի հետ ընդհարում ունեցող պ. Մեսրոպ Վարժապետեան և Աւետիս Գէորգեան հարցաքննիչ դատաւորի կարգադրութեամբ միայն 25ական լէֆ նրաշխատութեամբ ազատ արձակուած են:

Գուրպէթ օղլուին բոլոր ճիգերը և ուղտոտ պրպարութիւնները իր դէմը Կանաչակցականներու կողմէ դաւադրութիւն մը եղած ըլլալը հաստատելու համար, բոլորովին ապարդիւն անցեր են: Գուրպէթ օղլուն ատրճանակը առանց արտօնութեան կը կրէ եղբր, ատրճանակը գրուած է, իսկ լայն կրող ճէֆրին Գուրպէթ խիստ յանդիմանուած և դատաւարութեան միջոցին գուցէ աւելի խիստ յանդիմանուի:

— Վենետիկի Միթար միաբանութեանը մինչեւ վառահայր ընտրելը ընդհանուր թնտեսակալ ընտրուի է իր երկրագոյն անդամներէն Թադէոս Թոռնեան Մ. վարդապետը:

— Կալկաթայի, Պոմպէի, և Բէքինի մէջ քանի մը ազդեցիկ և հարուստ հայեր կը գտնուին, որոնք հայ հոգեւորականի պէտքը կըզան հոգեւորապէս մխիթարուելու համար:

— Էջմիածնի վիճակը շատ գէշ կը նկարագրուի: Խրիմեանի ազգական խորէն էֆէնտիի կաշառակերութեան շափն ու սահմանը անցած է: Խորէն էջմիածնի տէրն է, Երջանիկ են այն վանեցի հայերը, որոնք Խորէն էֆէնտիին հետ բարեկամական կապեր ունին:

Էջմիածնի մէջ գործերը ամբողջովին խառնակ վիճակի մէջ կը գտնուին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Դեսպանները ժողով կազմեր են Լիպանեանի կառավարչի ընտրութեան խնդիրը կարգադրելու համար: Թուրքիոյ թիկնածուն է Իւսուֆ Գուսսա:

— Իտալական նաւատորմի մը այցելիք է Ալպանոյ եղբրերը. այս անգամ Թուրք իշխանութիւնները լաւ ընդունելութիւն ըրեր են: Իտալական գաղթականութիւնը մեծ ուրախութիւնները է նաւատորմի յայցելութեան առթիւ:

— Բարձրագոյն Գուրպէթեանը է հայոց պատրիարքի հրաժարականը Սուլթանին յայտնել:

— Խուրք կառավարութիւնը մերժեց է կրէտէի բոսթան իբր

անկախ բոսթան ճանչնալ: Կրէտէի ազգային ժողովը որոշեց է Թուրքիոյ հետ բոսթանին յարաբերութիւնները խզել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Պուրկար կառավարութիւնը յայտարարած է պետութիւններուն որ Մակեդոնական գօնկրէն անշի պիտի ունենայ, բայց ինք աճեն միջոցներ պիտի ձեռք առնու որ գօնկրէն երկրի օրէնքին գծած սահմանէն դուրս բան մը չը կարենայ ընել:

Ռ Ո Ւ Ս ԵՒ Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Եւրոպական թերթերը կը հաշորդեն որ Ռուս և Գերման կայսրները իրենց վերջին տեսակցութեան մէջ խորհրդակցեցին ընդհանուր զինադուլի և առհասարակ զինուորներու թուի կրճատման մասին:

Յ Ա Ս Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԲԱԲԿԷՆ ՍԻՆԻՆ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Իրեցազնորէն» ի նպաստ Հայ Ուսանողական Միութեան:

Գինն է 1 լէֆ արծաթ: Կը ծախուի նաեւ «Ղարիպ Ազատութեան Ճանապարհին»:
Գինն է 90 սանթիմ վառնա

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

Կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ԹԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ Մամուլ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ: Հրատարակութեան անձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գիւրու թիւն ընծայուելու համար:

Բաժնեգրինն է 1 ֆրանք. բոսթի ծախքը հրատարակչին վրայ:

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն: Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչ» ընկերութեան:

Բաժանորդագրութեան համար գիծել հետեւեալ հասցէին:

Մոսկու Մոսկովսկայա

(Պուրկարի) Վ.Ա.Ռ.Ս.

ԱՆՋՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Փրանսայի նշանաւոր վեպաստներէն Ռընէ տը Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

17^ր և 18^ր թերթերը

հրատարակուեցան:

Գիրքը շաբաթը երկու թերթ կը հրատարակուի եւ իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի: Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժնեգրին 1 ֆր.: Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20:

Վառնայի դուրս, Պուրկարիոյ եւ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը շրջուին: փոսթի ծախքը հրատարակչին վրայ է: Գիծել հետեւեալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.

Դրամի փոխարէն նամակագրուիլ կը ընդունուի:

ԽՄԲԱԿՒՌՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը ապագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակազուրի, հարսանեկան հրաւրագիր, մահազգ:

Գիները յոյժ գիւրամատուցելու Ուրիշ քաղաքներէ եկալ յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ԱՆՋՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ ԿՈՒՆԻՍ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՌՈՒՍ ՄԻՌՈՒԹԻՆ

Եւրոպայի Հայ. Ռուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ գիւրու ընելու համար պէտք է գիծել հետեւեալ հասցէով: Իւնիոն Տէ Զէյիսիս Աւու. լ'Էօրոս րիւ սը լ'Էֆօլ սը Շիւլի Սուխ ժընէվ Կարգոյի Թանձնագրով

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական, լրագրային իրաւունքի, բնկերական հարցերու, գրական և գեղարուեստական:

Տարեկան 15 ֆր. Վեցամսեայ 8 ֆր. Հասցէ 24 rue Dauphine Paris

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ—Варна